


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. հոկտեմբերին


/վերլուծություն/

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 17413 գործարքներ, որոնց քանակը 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել է 34.4%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 9.3%-ով:

2012թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4554 օտարման գործարքների 77.1%-ը կազմել են առուվաճառքները, 22.2%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.2%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. հոկտեմբերին, 2012թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 25.4%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 8.7%-ով:

2012թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 58.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. հոկտեմբերին, 2012թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 55.0%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 8.6%-ով:

2012թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2012թ.	սեպտեմբեր 2012թ.
Կենտրոն	436100	419500	418200
Արաբկիր	342000	347000	346100
Քանաքեռ-Զեյթուն	265900	276100	274200
Նոր-Նորք	227700	239000	237000
Ավան	248900	248050	246550
Էրեբունի	226700	241500	240000
Շենգավիթ	233400	245000	243500
Դավթաշեն	253000	267000	266200
Աջափնյակ	226500	235600	234000
Մալաթիա-Սեբաստիա	223100	232100	231300
Նուբարաշեն	140100	142000	141000
Միջինը Երևանում	256700	263000	261600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հոկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. սեպտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2012թ. հոկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 424 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել է 3.9%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 15.2%-ով:

2012թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2012թ.	սեպտեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	125600	113600	113600
	Ապարան	52700	51050	50000
	Թալին	66100	61200	61200
Արարատ	Արտաշատ	96200	94000	92700
	Մասիս	107800	112000	110050
	Վեդի	91200	97700	97050
	Արարատ	77200	74200	74200

Արմավիր	Վաղարշապատ	141200	153200	153200
	Արմավիր	112600	119100	119100
	Մեծամոր	76500	86500	86500
Գեղարքունիք	Սևան	90700	99000	99000
	Գավառ	54500	55000	53600
	Մարտունի	96400	107200	107200
	Վարդենիս	33500	39500	38000
	Ճամբարակ	25500	24050	23050
Լոռի	Վանաձոր	86700	87200	87200
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	97900	99800	99800
	Ալավերդի	38100	53000	51600
	Տաշիր	49300	43800	43800
	Թումանյան	13300	11000	11000
	Շամլուղ	9800	8000	8000
Կոտայք	Աբովյան	143100	153100	153100
	Նոր Հաճն	126600	128500	128500
	Բյուրեղավան	104100	107100	107100
	Եղվարդ	114700	109300	109300
	Հրազդան	60700	60200	60200
	Ծաղկաձոր	201500	292500	292500
	Չարենցավան	73400	84000	84000
	Գյումրի	103300	108900	108900
Շիրակ	Արթիկ	63200	64800	64800
	Մարալիկ	37500	37300	37300
	Գորիս	118500	115300	115300
Սյունիք	Կապան	97100	90200	90200
	Սիսիան	86200	86000	84000
	Մեղրի	74100	72000	71050
	Ագարակ	45500	43800	43800
	Քաջարան	69100	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	79700	88500	87000
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	110100	117700	117700
	Ջերմուկ	114000	106000	104100
	Դիլիջան	99700	107800	106000
Տավուշ	Իջևան	119800	116000	114050
	Բերդ	53500	54000	52600
	Նոյեմբերյան	43300	43300	43300
	Այրում	32000	26200	25000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. սեպտեմբերի համեմատ, աճել են 0.6%-ով:

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 512 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 159, մարզերում միասին վերցրած՝ 353: 2012թ. հոկտեմբերին, 2012թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 43.4%-ով, ընդ որում Երևանում՝ 63.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 35.8%-ով: 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.8%-ով, ընդ որում Երևանում՝ 45.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է՝ 3.6%-ով:

2012թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են

հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2012թ.	սեպտեմբեր 2012թ.
Կենտրոն	455000	467500	466800
Արաբկիր	368000	375000	374500
Քանաքեռ Զեյթուն	276000	286200	284100
Նորք Մարաշ	300300	312500	310700
Ավան	257200	264600	263800
Էրեբունի	233000	232000	230000
Շենգավիթ	243500	249500	248000
Դավթաշեն	265000	267000	266100
Աջափնյակ	238000	242400	241000
Մալաթիա Սեբաստիա	233000	232100	230300
Նուբարաշեն	145800	145100	144500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	274000	279300	278200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել են են 0.4%:

2012թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2012թ.	սեպտեմբեր 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	130100	134800	134800
	Ապարան	55100	56000	54100
	Թային	67000	68650	68650
Արարատ	Արտաշատ	102700	98600	98600
	Մասիս	113700	113800	112100
	Վեդի	95300	100200	100200
	Արարատ	88200	87300	87300
Արմավիր	Վաղարշապատ	168200	152300	152300
	Արմավիր	115100	106500	105200
Գեղարքունիք	Սևան	95000	94200	94200
	Գավառ	56600	53500	52300
	Մարտունի	97100	94300	94300
	Վարդենիս	38300	36000	34000
	Ճամբարակ	28400	27100	26200
Լոռի	Վանաձոր	98000	98200	98200
	Ստեփանավան	79100	88000	87600
	Սպիտակ	108000	113600	113600
	Այվերդի	39600	48000	46050
	Տաշիր	54000	51100	51100
	Թումանյան	13900	12000	12000
	Շամլուղ	11500	13200	13200
	Ախթալա	24500	29600	29600

Կոտայք	Աբովյան	150000	154700	154700
	Նոր Հաճն	132000	129800	129800
	Բյուրեղավան	109000	120000	120000
	Եղվարդ	120000	116100	116100
	Հրազդան	65000	80000	79800
	Ծաղկաձոր	309500	305000	305000
	Չարենցավան	75700	82500	82300
Շիրակ	Գյումրի	119700	117400	117400
	Արթիկ	67000	62500	61200
	Մարալիկ	39000	49500	49500
Սյունիք	Գորիս	126500	127000	127000
	Կապան	100900	98300	98300
	Սիսիան	89500	90100	90000
	Մեղրի	76200	78800	77000
	Ագարակ	46200	46300	46300
	Դաստակերտ	10500	11610	11610
Վայոց Ձոր	Վայք	82200	85400	84800
	Եղեգնաձոր	118500	114900	113300
	Ջերմուկ	117200	123000	122850
Տավուշ	Դիլիջան	105400	109600	109600
	Իջևան	129700	122000	122000
	Բերդ	57000	59000	58000
	Նոյեմբերյան	46000	46100	46100
	Այրում	33300	34600	34600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. սեպտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1414 միավոր /930.85 հա/ հողեր, որից Երևանում՝ 129 միավոր /10.03 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 657 միավոր /871.20 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /1.51 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 537 միավոր /45.70 հա/, որից Երևանում՝ 100 միավոր /6.74 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 197 միավոր /9.52 հա/, որից Երևանում՝ 18 միավոր /1.78 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 15 միավոր /2.33 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 7 միավոր /2.04 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.07 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1228 միավորի /856.87 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 100 միավոր /6.99 հա/, նվիրատվության գործարքներ՝ 167 միավորի /70.03 հա/, որից Երևանում՝ 27 միավոր /2.99 հա/ և փոխանակության գործարքներ՝ 19 միավորի /3.95 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2012թ. հոկտեմբերին, 2011թ. հոկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.8%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 9.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի

նկատմամբ աճել է 40.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 364.60 հա, որից 358.95 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.8%-ը կամ 378 գործարքներ /146.51 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 23 միավոր /1.09 հա/, իսկ 68.6%-ը կամ 842 միավորը /710.29 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 77 միավոր /5.90 հա/: 2012թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 8 գործարք /0.07 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	0	0.00	22	1.03	1	0.06	5	0.29	0	0.00	58	4.09	14	1.52				
Արագածոտն	24	27.78	1	0.02	3	0.07	7	0.44	68	79.78	0	0.00	27	2.78	0	0.00				
Արարատ	21	59.59	2	0.05	8	0.75	43	0.48	73	71.18	1	0.74	47	3.78	9	1.15				
Արմավիր	14	13.45	1	0.003	1	0.01	9	0.11	87	345.50	0	0.00	56	5.36	4	0.17				
Գեղարքունիք	0	0.00	1	0.20	18	1.06	35	1.25	29	17.85	1	0.21	9	1.17	1	0.10				
Լոռի	1	1.20	1	0.15	2	0.02	3	0.25	34	25.38	0	0.00	14	1.27	3	0.05				
Կոտայք	19	23.40	1	0.24	51	3.13	16	0.46	105	56.22	0	0.00	80	6.62	6	0.70				
Շիրակ	0	0.00	1	0.06	5	0.08	8	0.11	31	26.70	0	0.00	8	0.55	0	0.00				
Սյունիք	2	1.74	0	0.00	1	0.10	0	0.00	19	27.53	0	0.00	7	0.80	2	0.26				
Վայոց Ձոր	7	3.33	0	0.00	12	0.58	8	0.10	10	21.69	0	0.00	5	0.40	1	0.04				
Տավուշ	4	1.07	4	0.65	8	2.56	11	0.76	8	3.12	0	0.00	15	1.47	1	0.004				
Ընդամենը	92	131.56	12	1.37	131	9.39	141	4.02	469	675.24	2	0.95	326	28.29	41	3.99				

Ստորև ներկայացվում է 2012թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Ընդամենը				Գյուղ. նշանակության հողերի				Բնակավայրերի հողեր			
																	Բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	16	0.62	0	0.00	15	0.56	1	0.06	7	0.46	0	0.00	0	0.00	7	0.46	0	0.00		
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	35	28.31	24	27.78	1	0.02	3	0.07	7	0.44		
Արարատ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	73	60.86	21	59.59	2	0.05	8	0.75	42	0.47		
Արմավիր	3	0.015	1	0.003	1	0.01	1	0.002	18	12.33	10	12.23	0	0.00	0	0.00	8	0.10		

Գեղարքունիք	5	0.08	0	0.00	3	0.07	2	0.01	49	2.42	0	0.00	1	0.20	15	0.98	33	1.24
Լոռի	2	0.152	1	0.15	1	0.002	0	0.00	5	1.47	1	1.20	0	0.00	1	0.02	3	0.25
Կոտայք	6	0.57	0	0.00	6	0.57	0	0.00	81	26.67	19	23.40	1	0.24	45	2.57	16	0.46
Շիրակ	9	0.10	0	0.00	2	0.01	7	0.09	5	0.16	0	0.00	1	0.06	3	0.08	1	0.02
Սյունիք	1	0.10	0	0.00	1	0.10	0	0.00	2	1.74	2	1.74	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	4	0.014	0	0.00	1	0.01	3	0.004	23	4.00	7	3.33	0	0.00	11	0.57	5	0.10
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	27	5.04	4	1.07	4	0.65	8	2.56	11	0.76
Ընդամենը	47	1.66	2	0.15	30	1.33	15	0.18	325	143.46	88	130.34	10	1.22	101	8.06	126	3.84

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /1.22 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. հոկտեմբերին, 2011թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 5.9%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 3.5 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 4.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 17.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 8.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 61.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	13	9.62	71.9	651.8	202.8	55	59.62	365.0	12000.0	3755.2
Ապարան						3	2.43	86.5	2727.3	708.3
Թալին	11	18.16	38.2	38.5	38.3	5	8.40	93.6	5494.5	618.8
Ծաղկահովիտ						4	8.33	79.5	1000.0	252.4
Արարատի մարզ										
Արտաշատ						27	17.20	335.1	10833.3	2782.2
Մապիս	8	7.99	67.8	334.7	209.5	12	4.47	200.0	11904.8	3145.2
Վեդի	13	51.60	16.2	1371.4	250.9	29	14.27	207.0	10795.1	1870.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	8.66	57.5	290.1	112.6	48	41.13	294.3	9090.0	1500.2
Բաղրամյան	2	3.00	70.9	70.9	70.9	14	261.21	90.6	2561.1	760.0
Վաղարշապատ	2	0.56	74.8	1008.5	541.6	24	42.20	444.4	11764.7	2545.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						25	5.84	199.8	1875.0	407.4
Ճամբարակ								60.5	953.3	342.5
Մարտունի								51.1	2850.0	733.6
Սևան								52.2	2134.8	318.5
Վարդենիս						4	12.01	41.2	2575.1	397.3
Լոռու մարզ										
Ալավերդի						3	1.47	170.4	6424.2	630.0
Գուգարք						3	0.34	234.6	6065.9	751.3
Սպիտակ						1	0.06	250.0	5555.5	732.3
Ստեփանավան	1	1.20	483.0	483.0	483.0	17	16.27	90.6	1686.6	302.5
Տաշիր						6	2.67	45.3	1384.4	147.3

Կոտայքի մարզ										
Աբովյան	12	16.04	35.9	396.1	177.6	26	13.94	279.3	11942.7	4600.0
Եղվարդ	4	5.82	74.2	1295.2	392.7	50	35.88	174.4	11971.8	2710.4
Հրազդան	3	1.54	104.9	1000.0	510.0	29	6.40	130.5	10256.4	1795.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						11	5.52	252.0	1693.1	600.0
Ամասիա								40.9	261.0	128.5
Անի						16	13.84	110.6	546.9	370.0
Աշոցք								58.5	215.8	126.1
Արթիկ						4	7.33	79.4	1428.6	390.0
Սյունիքի մարզ										
Գորիս	2	1.74	560.0	1550.0	1055.0	8	14.39	92.6	1023.2	705.3
Կապան						2	0.78	120.0	841.6	350.0
Մեղրի								193.0	3000.0	725.5
Սիսիան						9	12.35	46.3	1977.4	520.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	2.33	77.9	1375.0	344.7	7	20.66	125.0	10000.0	1885.0
Վայք	2	1.00	358.8	358.8	358.8	2	0.85	58.8	1430.7	615.5
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	675.3
Իջևան	2	0.55	1265.0	3960.0	2612.5	3	0.56	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան	2	0.52	2442.0	2684.4	2563.2	5	2.56	46.7	7368.4	850.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հոկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	724.0	922.0	3547.7	2461.4	25	23516.0	130.7	22200.0	2573.8
Ապարան						2	4320.0	124.1	609.6	389.0
Թային								63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	3097.2	358.0	5588.9	1896.5	18	15450.0	173.9	7140.3	894.0
Մասիս	3	1231.8	654.8	3265.5	1578.8	20	15027.2	187.5	25000.0	1206.0
Վեդի	1	3192.0	411.3	411.3	411.3	9	7304.5	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						21	22438.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան								100.0	833.3	239.1
Վաղարշապատ						35	31145.0	197.4	26528.4	1526.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								186.6	1084.3	665.2
Ճամբարակ						1	1500.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	9	9627.4	219.8	244.2	222.5	6	7568.1	119.3	5000.0	280.0
Սևան						1	569.0	240.0	3110.4	307.5
Վարդենիս	6	216.0	600.0	600.0	600.0	1	2097.0	72.5	987.2	150.0

Լոռու մարզ										
Այլպերդի						3	2286.0	114.3	1388.9	216.4
Գուգարք	1	180.0	3381.0	3381.0	3381.0	7	4864.8	77.9	14083.3	1132.0
Սպիտակ						2	2790.0	104.9	1348.3	205.4
Ստեփանավան						1	2260.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	520.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	24	11147.0	641.0	5207.1	3027.1	37	24816.5	264.5	35353.5	1973.0
Եղվարդ	18	13314.0	229.2	2861.4	2155.3	37	33242.8	173.6	27000.0	2853.0
Հրազդան	3	1190.0	1322.7	3131.3	2133.0	5	7250.0	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	726.6	1680.2	3150.0	2415.1	7	4027.4	113.6	18750.0	332.3
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	1490.0	67.9	180.6	160.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	1	24.0	5750.0	5750.0	5750.0			111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	5521.0	112.2	1700.0	367.8
Կապան								67.9	2638.9	300.0
Մեղրի						1	200.0	68.5	632.9	201.5
Սիսիան						2	1694.0	123.5	875.0	200.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	1162.5	756.0	760.0	757.8	2	1800.0	96.7	7659.6	500.0
Վայք	8	4566.1	851.4	871.5	858.3	2	1272.4	120.7	1448.3	204.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	111.0
Իջևան	8	25561.0	3000.0	4800.0	3225.0	10	10496.5	74.1	14423.1	516.2
Նոյեմբերյան						5	4221.0	125.0	1948.1	224.0

2012թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 920 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 66.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. հոկտեմբերին, 2012թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 30.7%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 40.2%-ով:

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 58 բնակարանների, 114 անհատական բնակելի տների, 419 հասարակական, 79 արտադրական նշանակության օբյեկտների, 223 հողերի, 2 այգետնակի և 25 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 3 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.17 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 50.0%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 70.0%-ով: 2012թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 511.69 հա հողերից 0.37 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 511.31 հա հողերից 496.03 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 11.98 հա արդյունաբերական օբյեկտների, 1.07 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 358.06 հա, որից 357.77 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2090 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.0%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական

գրանցումների քանակը, 2012թ. սեպտեմբերի համեմատ, աճել է 31.9%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 1.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.3%/, առանձնատների /25.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.5%/ և հողերի /6.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1147 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. սեպտեմբերի համեմատ, աճել է 53.3%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ՝ 18.4%-ով:

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 251.64 հա հողեր, որից 8.93 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 91.8%-ը կամ 230.95 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Կոտայքի մարզում՝ 97.70 հա, որից 87.90 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 170 գործարքներ, որից 123-ը՝ Երևանում: 2012թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 63.5%-ով, ընդ որում Երևանում՝ 83.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 27.0%-ով: 2011թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 18.7%-ով, ընդ որում Երևանում՝ 19.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 16.1%-ով:

2012թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2334 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. սեպտեմբերի համեմատ աճել է 30.4%-ով, իսկ 2011թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 19.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /45.2%/:

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե